

**ԲԱԺԻՆ 1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԱՅԻՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ**

ՀՏԴ 37.01

DOI: 10.53068/25792997-2025.2.15-55

**ՄՈԴԵԼԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ
ՌԱԶՄԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑ**

Բ. Լ. Երիցյան,

*Հայաստանի Հանրապետության Պաշտպանության
նախարարության Վազգեն Սարգսյանի անվան
ռազմական ակադեմիա, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: Մոդելային սանդղակ, հրետանավոր, ռազմակիրառական հմտություններ, շարժողական ընդունակություններ, մանկավարժական թեստավորում, վերահսկում, միջոց, արգելագոտու հաղթահարում:

Հետազոտության արդիականություն: ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում դասավանդվող մարտական պատրաստության տասնյոթ առարկաների շարքում են ֆիզիկական, հատուկ ֆիզիկական ու մասնագիտակիրառական ֆիզիկական պատրաստությունները:

Արտերկրի բազմաթիվ գիտնականներ ուսումնասիրել են զինծառայողների և ուժային կառույցներում աշխատող սպաների շարժողական ընդունակությունների, ռազմակիրառական հմտությունների զարգացման խնդիրները, պաշտպանել ատենախոսություններ՝

ստեղծելով տվյալ ուղղության հարուստ գրականություն: Ամփոփելով գրական նյութը և հետազոտողների եզրակացությունները՝ կարող ենք նշել, որ բոլորն առանց բացառության ընդգծել են ֆիզիկական պատրաստության կարևորությունը ուժային կառույցներում և, հատկապես դրա մասնագիտակիրառական բաղադրիչը՝ շեշտելով դրա անհրաժեշտությունը զինված ուժերում՝ համարելով այն մասնագիտական պատրաստման հիմնական միջոցներից մեկը [5,6,7,8,9,10]:

Նախագինակոչային և զինակոչային տարիքի պատանիների ֆիզիկական պատրաստվածության վիճակի հետազոտմանն ու կատարելագործմանն են նվիրված մի շարք գիտնականների հետազոտություններ՝ թե ԱՊՀ, և թե Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ երկրներում: Նրանց ներկայացրած

տվյալները փաստում են բանակ զորակոչվող երիտասարդների ֆիզիկական պատրաստվածության ցածր մակարդակը, ինչը հետագայում լրացուցիչ խնդիրներ է ստեղծում հրամանատարների համար [7,10]:

Ցածր են մարզական ցուցանիշները նաև Հայաստանի Հանրապետությունում: Հիմք ընդունելով հանրապետական սպարտակիադայի արդյունքները՝ զինակոչային տարիքի պատանիները մի շարք վարժություններից ցուցադրել են ցածր արդյունքներ, իսկ ոմանք ի վիճակի չեն եղել ավարտել վարժությունները [4]: Ճիշտ է, մեջբերումը վերաբերում է 90-ական թվականների վերջին, սակայն, ցավոք, միտումը շարունակվում է մինչև մեր ժամանակները:

Անհրաժեշտ է նշել, որ եթե աշխարհի բազմաթիվ երկրներում զինակոչիկների և զինվորականների շարժողական ընդունակությունները լրջորեն ուսումնասիրվել են, և որի մասին առկա է հարուստ գրականություն, ապա Հայաստանի Հանրապետության զինծառայողներին վերաբերվող որևէ հետազոտություն մեզ հասանելի և ուսումնասիրված գրականության ցանկում չկա: Այս փաստը մտահոգիչ է և ցույց է տալիս իրական վերաբերմունքը գիտության այդ ոլորտի նկատմամբ:

Վերևում բերված վերլուծությունը հիմնավորում է սույն ուղղվածության

գիտափորձերի անցկացման և դիտարկումների վերլուծության անհրաժեշտությունն ու մեր պայմաններում գիտափորձի կազմակերպման արդիականությունը:

Հետազոտության նպատակը, խնդիրները: Հետազոտության նպատակն է՝ մշակել ֆիզիկական պատրաստվածության գնահատման մոդելային սանդղակներ:

Գիտության և տեխնիկայի զարգացմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ էր մշակել ֆիզիկական պատրաստության կազմակերպման նոր մոտեցումներ հետևողականորեն զարգացնելու համար կուրսանտների շարժողական ընդունակությունները և ռազմակիրառական հմտությունները, ուստի, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում, բոլոր կուրսանտների ներգրավմամբ, անցկացվել է երկամյա գիտափորձ, որի ընթացքում ուսումնասիրվել են նրանց ռազմակիրառական հմտությունները, չափագրվել կարևոր շարժողական ընդունակությունները:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության ընթացքում օգտվել ենք հետևյալ մեթոդներից՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում, մանկավարժական թեստավորում, մանկավարժական

գիտափորձ, մաթեմատիկական վիճակագրություն, մոդելային սանդղակների կառուցում:

Հետազոտությունը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում: Հետազոտությունն անցկացվել է 2018-2020 թվականների ընթացքում, երկու ուսումնական տարի տևողությամբ, որին մասնակցել են գործող ֆակուլտետների 1-4-րդ կուրսի բոլոր կուրսաանոնները:

Ռազմակիրառական վարժությունների չափագրումն անցկացվել է ռազմական ակադեմիայի տարբեր վարժությունների համար նախատեսված արգելագոտում, մյուս երկու ցատկային վարժությունները ստուգվել են մարզավանում, իսկ գետնից սեղմումները և Հարվարդյան ստեպ թեստը ակադեմիայի մարզադահլիճում՝ առկա մարզագույքի օգտագործմամբ:

Աշխատանքի ընթացքում կատարվել է ֆիզիկական զարգացման, շարժողական ընդունակությունների և ռազմակիրառական հմտությունների չափագրում, ստացված տվյալները վերլուծում, մոդելային սանդղակների կառուցում, ինչը հնարավորություն տվեց համեմատական կարգով գնահատել ֆիզիկական պատրաստության գործ-ընթացի կազմակերպման որակը, հազեցնել այն

նոր վարժություններով՝ նպաստելով շարժողական ընդունակությունների աճին և ռազմակիրառական հմտությունների բարելավմանը:

Չափագրումներն անցկացվել են Մոսկվայի անթրոպոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտում մշակված մեթոդիկայով, ըստ որի՝ ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշներ են ընտրվել մարմնի զանգվածը (քաշը), հասակը և կրծքավանդակի շրջագիծը:

Հիմնախնդրի խորությամբ ուսումնասիրման արդյունքում ընտրվեցին առավել անհրաժեշտ շարժողական ընդունակությունները, որոնք, համաձայն պրոֆեսոր Ֆ.Գ.Ղազարյանի «Շարժողական ընդունակությունների բանաձևը» մենագրության [3] նյութերի, շարժողական ընդունակությունների դասակարգմամբ սահմանված են՝ մկանային ուժը զարգացնող՝ «առավել բազային», իսկ սեղմումները գետնի վրա, ու ցատկունակությունը զարգացնող՝ «ոչ առավել բազային» վերցատկ տեղից և հեռացատկ տեղից վարժություններն ու Հարվարդյան ստեպ թեստը:

Կուրսաանոնների աշխատունակությունը որոշելու նպատակով անցկացվել է Հարվարդյան ստեպ թեստ, ըստ որի՝ հետազոտվողը, հինգ րոպե տևողությամբ, յուրաքանչյուր րոպեի ընթացքում 30 անգամ բարձրանում և իջնում

էր 50 սմ բարձրություն ունեցող աստիճանից: Ապա հաջորդող երեք րոպեներից յուրաքանչյուրի վերջում չափվում էր սրտի զարկերի քանակն, ու ստանում երեք արդյունք, ինչից հետո հաշվարկվում էր կուրսանտի աշխատունակությունը՝ հետևյալ բանաձևով $\angle U\theta = t \times 100 / f1 + f2 + f3 / \times 2$ (Մ.Գ.Աղաջանյան) [1]:

Ուժը որոշելու նպատակով ընտրվել էր սեղմումներ հատակից վարժությունը, իսկ ցատկունակությունը՝ վերցատկ տեղից և հեռացատկ տեղից վարժությունները: Վերցատկ տեղից վարժությունը չափվել է Աբալակովի գործիքի կիրառմամբ, իսկ հեռացատկ տեղից վարժությունը՝ նշագծից ցատկով ցատկափոսի մեջ, հեռավորության չափմամբ:

Ռազմակիրառական հմտությունները որոշելու համար ընտրվել էին. թիվ 17՝ ընդ-հանուր ստուգողական վարժություն միասնական արգելագոտում, և թիվ 18՝ հատուկ ստուգողական վարժություն՝ արգելագոտիներում [2]:

Թիվ 17՝ ընդհանուր ստուգողական վարժություն միասնական արգելագոտում: Վարժությունը կատարվում է առանց զենքի: Տարածությունը՝ 400 մ: Ելադիրքը՝ խրամատում կանգնած: Խրամատից 600 գրամանոց նռնակը նետել դեպի 20 մ հեռու պատը կամ պատի դիմացի 1 մ 26 սմ հատվածը (հաշվում են ուղիղ դիպչելը), առաջին նռնակով նշանակետին չդիպչելու դեպքում

նետումները շարունակել (սակայն երեք նռնակից ոչ ավելի) մինչև նշանակետին դիպչելը: Դուրս ցատկելով խրամատից և արգելագոտու սկիզբը տանող վազքով վազել 100 մետր, շրջանցելով դրոշակը, ցատկել 2.5 մ լայնությամբ փոսի վրայով, վազքով հաղթահարել լաբիրինթոսը, մագլցելով անցնել ցանկապատը, ուղղահայաց աստիճանով բարձրանալ քանդված կամրջի երկրորդ(կորացած) հատված, վազել գերանների վրայով՝ ցատկով անցնել փվածքը և գերանի բերջին կտրտվածքից՝ կանգնած դրությունից ցատկել ներքև: Հաղթահարել քանդված սանդուղքի երեք աստիճանները, յուրաքանչյուր աստիճանից հետո երկու ոտքով անպայման դիպչել գետնին, անցնել չորրորդ աստիճանի տակով: Անցնել պատի բացվածքով, ցատկել փոսը, անցնել հաղորդակցման ուղին, դուրս գալ ջրափոսից, ցատկով անցնել պատի վրայով, թեք սանդուղքով բարձրանալ չորրորդ աստիճանի վրա և իջնել քանդված աստիճանի սանդուղքներով: Ուղղահայաց սանդուղքով բարձրանալ քանդված կամրջի գերանի վրա, վազել գերանի վրայով՝ թռչելով բացվածքների վրայով, իջնել թեք տախտակով, ցատկել 2 մետրանոց փոսի վրայով, վազքով անցնել 20 մ և շրջանցել դրոշակը՝ վազքով, հակառակ ուղղությամբ, վազքով անցնել 100 մ, վերադառնալ ելադիրք [2]:

Թիվ 18՝ հատուկ ստուգողական վարժություն արգելագոտիներում: Կատարվում է ավտոմատով, երկու փամփշտատուփով, պայուսակով և հակազագով: Տարածությունը՝ 400 մ: Ելադիք՝ զրահափոխադրիչի կողքին կանգնած (զենքը ձեռքին, հակազագը պայուսակում): Զրահափոխադրիչի կողային մասից բարձրանալ նրա վրա, վայր ցատկել հակառակ կողմից: Վազել 200մ դեպի առաջին խրամատը՝ շրջանցելով դրոշակը, ցատկել խրամատը և հագնել հակազագը: Դուրս ցատկել խրամատից, անցնել գերանի վրայով՝ հաղթահարել ձորակը կամ ուղղահայաց սանդուղքով բարձրանալ գերանի վրա և անցնել այն ու վայր ցատկել: Հաղթահարել փվածքը, ցատկել փոսը, հետնամասից 40 կգ-ոց արկղը տեղափոխել առաջամաս և նորից հետ տանել: Հանել հակազագը և տեղավորել պայուսակում, դուրս ցատկել փոսից, անցնել լաբիրինթոսը, թեք տախտակով բարձրանալ ցանկապատի վրա, անցնել գերանի վրա, վազել նրա վրայով՝ ցատկելով փվածքների վրայով և կանգնած դրությունից վայր ցատկել գերանի վերջին հատվածից, ցատկերով անցնել քանդված սանդուղքը՝ ոտքը դիպցնելով բոլոր աստիճաններին և վերջին աստիճանից վայր ցատկել, անցնել պատի վրայով, ցատկել ջրհորը, հաղորդակցման ուղիով վազել մինչև խրամատ, առնվազն

1կգ քաշով հակատանկային նռնակը նետել 15մ հառու, սակայն 3 նռնակից ոչ ավելի՝ 2X1 մ չափով վահանի վրա: 1-ին փորձի ժամանակ վահանին չդիպչելու դեպքում նետումները շարունակել մինչև որ նշանակետը խոցվի: Դուրս ցատկել խրամատից և հաղթահարել կիսապատը: Մտնել ճակատային պատի ստորին պատուհանը, դրանից՝ վերին պատուհանը, այնտեղից էլ անցնել գերանին, գնալ դրա ամբողջ երկայնքով, հաջորդաբար վայր ցատկել առաջին, երկրորդ հարթակներին ու գետնին, վազել, ապա ցատկել խրամատի վրայով՝ այդպիսով հատել վերջնագիծը [2]:

Արգելագոտու հաղթահարում վարժության տիրապետման բարդ գործընթացը՝ մեծաքանակ արգելքների առկայությամբ, տեղի էր ունենում բազմաթիվ դժվարությունների հաղթահարման պայմաններում և կրկնություններով, երբ ապագա սպաները դրսևորում էին տարբեր կամային հատկանիշներ՝ համառություն, տոկունություն, վճռականություն, իսկ երբ չէր ստացվում՝ երբեմն հիասթափություն, երբեմն էլ՝ հուսահատություն, սակայն վերջնարդյունքում, չորս տարվա համառ աշխատանքի շնորհիվ՝ կոփում էին կամք ու տիրապետում անհրաժեշտ հմտությունների:

Գնահատման մոդելային սանդղակները կազմելու նպատակով գիտափորձին ներգրավվել են I-IV կուրսերի բոլոր կուրսանտները: Ուսումնասիրության ծրագիրը ներառում էր նշված շարժողական ընդունակությունների և ռազմակիրառական հմտությունների գնահատումը, ցուցանիշների մշակումը և այդ ցուցանիշների շարադրումը՝ ըստ

գնահատման 5 (բարձր, միջինից բարձր, միջին, միջինից ցածր և ցածր) աստիճանների:

Մեջ բերված մոդելային սանդղակների մշակման համար օգտագործվել են գիտության մեջ հաճախ կիրառվող $0,67 \sigma$ -ից մինչև $1,5 \sigma$ սիգմայական շեղում (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Մոդելային սանդղակի մշակման մեթոդիկա

Գնահատման աստիճան	Հաշվարկ՝ ըստ σ շեղման
բարձր	$X+1.5\sigma$ և բարձր
միջինից բարձր	$X+0.67\sigma$ – ից մինչև $X+1.5\sigma$
միջին	$X-0.67\sigma$ – ից մինչև $X+0.67\sigma$
միջինից ցածր	$X-0.67\sigma$ –ից մինչև $X-1.5\sigma$
ցածր	$X-1.5\sigma$ և ցածր

Աղյուսակ 2

Մոդելային սանդղակ. II կուրսի հրեպանավոր կուրսանդների

		Ցուցանիշներ				
		բարձր	միջ. բարձր	միջին	միջ. ցածր	ցածր
Ֆիզիկական զարգացում	հասակը (սմ)	178.8 և բարձր	178.7 – 176.5	176.4 – 172.5	172.4 – 170.6	170.5 - և ցածր
	մասսա (կգ)	70.6 և բարձր	70.5 – 68.3	68.2 – 64.5	64.4 – 62.2	62.1 և ցածր
	կրծքավանդակի շրջ. (սմ)	91.7 և բարձր	91.6 – 89.7	89.6 – 86.3	86.2 – 84.3	84.2 և ցածր
	սեղմումներ հատակից	30.2 և բարձր	30.1- 28.9	28.8-27.2	27.1- 25.9	25.8 և ցածր

Շարժողական ընդունակություններ	վերցատկ տեղից (սմ)	52.5 և բարձր	52.6-51.1	51.0-48.9	48.8-47.5	47.4 և ցածր
	հեռացատկ տեղից (սմ)	227.9 և բարձր	227.8-224.1	224.0-217.9	217.8 - 214.1	214.0 և ցածր
	ՀՍԹ	73.6 և բարձր	73.5-72.3	72.2 - 70.1	70.0-68.6	68.5 և ցածր
Ռազմակիրառական հմտություններ	վարժություն թիվ 17	148.2 և բարձր	148.3-149.4	149.5 - 151.2	151.3 - 152.4	152.5 և ցածր
	վարժություն թիվ 18	200.8 և բարձր	200.9-204.2	204.3 - 209.6	209.7 - 213.0	213.1 և ցածր

Աղյուսակ 3

II կուրսի հրետրանավոր կուրսանյանների թեստավորման արդյունքները

Որներ	Տվյալներ և հմտություններ	Ժամկետ	Ցուցանիշներ					
			ստուգողական			փորձարարական		
			x+ m	t	P	x+ m	t	P
Ֆիզիկական զարգացում	Հասակ (սմ)	սկիզբ	172.6/1.1	1.5	>0,05	172.9/1.13	1.5	>0,05
		ավարտ	174.7/0.9			174.9/0.9		
	Մասսա (կգ)	սկիզբ	64.1/0.7	2.1	<0,05	174.9/0.9	1.9	>0,05
		ավարտ	66,0/0.5			65.3/0.9		
	Կրծքավանդակի շրջագիծ (սմ)	սկիզբ	85.3/0.7	3.1	<0,01	85.0/0.6	3.7	<0,01
		ավարտ	88.8/0.8			88.3/0.6		
Շարժողական ընդունակություններ	Վերցատկ տեղից (սմ)	սկիզբ	46.2/0.7	3.1	<0,01	46/0/0.7	7.5	<0,01
		ավարտ	50.4/0.6			54.6/0.9		
	Հեռացատկ տեղից (սմ)	սկիզբ	217.1/1.4	2.4	<0,05	215.2/1.06	4.9	<0,01
		ավարտ	220.8/0.9			225.0/1.7		
	Սեղմումներ հատակից	սկիզբ	35.1/0.6	4.7	<0,01	34.7/0.8	9.7	<0,01
		ավարտ	40.4/0.93			46.7.0.96		
	ՀՍԹ(միավ)	սկիզբ	65.6/0.7	3.8	<0,01	65.1/0.7	6.8	<0,01
		ավարտ	69.6/0.8			71.8/0.7		
Ռազմակիրառական հղմություններ	վարժություն թիվ 17	սկիզբ	153.8/1.3	3.7	<0,01	150.0/1.2	6.9	<0,01
		ավարտ	147.9/1.1			138.6/1.1		
	վարժություն թիվ 18	սկիզբ	208.1/1.2	3.5	<0,01	208.3/1.2	11.2	<0,01
		ավարտ	202.9/0.9			192.7/0.7		

Հետազոտության արդյունքների

վերլուծություն: Հետազոտության արդյունքում առաջին անգամ հետազոտվել են ռազմական ակադեմիայի կուրսանտների շարժողական ընդունակություններն ու ռազմական հմտությունները (աղյուսակ 3):

Տվյալները հաշվարկվել են՝ ըստ կուրսերի և զինվորական մասնագիտությունների: Բերվում է II կուրսի հրետանավոր կուրսանտների ցուցանիշների մոդելային սանդղակը (աղյուսակ 2), որտեղ շարժողական ընդունակությունների, ռազմակիրառական հմտությունների և ֆիզիկական զարգացման յուրաքանչյուր ցուցանիշ ունի իր համապատասխան գնահատականը:

Առաջարկվող մոդելային սանդղակը իրավագոր է, քանի որ հաշվարկված է սոցիալական նույն միջավայրում:

Մոդելային սանդղակները հնարավորություն են ընձեռում.

- գնահատել յուրաքանչյուր կուրսի կուրսանտի շարժողական ընդունակությունների և ռազմակիրառական հմտությունների մակարդակն ուսման տարբեր փուլերում,

- բացահայտել անբավարար ռազմակիրառական հմտություններ և շարժողական ընդունակություններ ունեցող կուրսանտներին և ուղենշել նրանց այդ որակների զարգացման միջոցներն ու մեթոդները,

ըստ ռազմակիրառական հմտությունների և շարժողական ընդունակությունների զարգացման աստիճանի՝ մոտավորապես հավասար պատրաստվածություն ունեցող կուրսանտներին բաժանել խմբերի՝ անհատականացնելու և տարբերակելու համար նրանց մարզման գործընթացը:

Անդրադառնալով գիտափորձի արդյունքում ստացված ստուգողական և փորձարարական խմբերի կուրսանտների ցուցադրած արդյունքներին՝ տեսնում ենք, որ ֆիզիկական զարգացման առումով ցուցանիշների գործակիցների տարբերությունը չնչին է կամ առհասարակ բացակայում է, իսկ շարժողական ընդունակությունների ու ռազմակիրառական հմտությունների ցուցանիշների աճը փորձարարական խմբերում զգալիորեն բարձր է ստուգողական խմբերի ցուցադրած արդյունքների համեմատությամբ՝ բոլոր նախատեսված վարժություններից: Դա ցայտուն երևում է 3-րդ աղյուսակում:

Այսպես, եթե շարժողական ընդունակություններից, հեռացատկ տեղից վարժության արդյունքներով ստուգողական խմբի t -գործակիցը = 2.4 , իսկ $p > 5$ -ից, ապա փորձարարական խմբի t գործակիցը = 4.9 և $p < 1$ -ից, նշանակում է, որ երկու խմբերի աճի պարագայում փորձարարական խմբի առաջընթացը մեծ է - 2.5-ով:

Համեմատելով վերցատկ տեղից և սեղմումներ գետնից վարժությունների գործակիցները՝ տեսնում ենք, որ՝ եթե ստուգողական խմբի t գործակիցը = 3.1, իսկ փորձարարականինը $t = 7.5$, աճը կազմել է - 4.4, իսկ մյուս վարժությունից ստուգողականում $t = 4.7$, իսկ փորձարարականում $t = 9.7$, աճը - 5 է, ինչն էլ հավաստում է փորձարարական խմբի ավելի մեծ առաջընթացի մասին:

Համեմատելով ռազմակիրառական հմտություններն արտացոլող արգելագոտու հաղթահարման թիվ 17 և 18 վարժությունները՝ տեսնում ենք նույն համամասնությունը, երբ փորձարարական խմբերում, համեմատ ստուգողականների, աճը շեշտակի մեծ է. առաջինում՝ t -ն - 3.7-ից աճել է - 6.9, տարբերությունը կազմում է - 3.2, երկրորդում՝

t -ն - 3.5-ից աճել է - 11.2, տարբերությունը կազմում է - 7.7: Բերվող ցուցանիշների համեմատությունը հավաստում է, որ այս վարժություններից նույնպես աճը մեծ է:

Եզրակացություն: Առաջին անգամ մշակվել են ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի հրետանավոր կուրսանտների շարժողական ընդունակություններն ու ռազմակիրառական հմտությունները: Փորձարկման ծրագիրը նպաստեց կուրսանտների ռազմակիրառական հմտությունների զարգացմանը:

Առաջարկվող վարժությունների կրկնությունն ու կատարելագործումը նպաստում են ռազմակիրառական հմտությունների արագ աճին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաջանյան Մ.Գ., Սպորտային բժշկություն, Դասագիրք, Երևան, 2015, 462 էջ:
2. ՀՀ ՁՈՒ ֆիզիկական պատրաստության ձեռնարկ, Երևան, 2021, 128 էջ:
3. Ղազարյան Ֆ.Գ., Շարժողական ընդունակությունների բանաձև, Մենագրություն, Երևան, 2015, 128 էջ:
4. Казарян Ф.Г., Купалян Ю.Е., Характеристика уровня двигательной подготовленности молодежи Армении допризывного и призывного возраста: Тезисы док. Науч конф. Армянского гос.инст. ФК. Ереван: 1996. 60с.
5. Непомнящий С. В., Средства и методы профессионально-прикладной физической подготовки работников отдельных подразделений МВД СССР: Автореферат диссертации КПН, М., 1989., 24 с.

6. Озолин Н.Г., Настольная книга тренера. М.: Физкультура и спорт, 2002. 864с.
7. Сухоцкий В.И., Теоретический раздел требования военно-спортивного комплекса. М., 1975г., 62 с.
8. Теоретические основы физической подготовки и спорта. Учебное пособие, Ленинградское высшее общевойсковое командное училище имени С. Кирова., Петродворец., 1990. 54с.
9. Шиян Б.М., Теория и методика физического воспитания: Уч. пособие для студ. Пед. инст. и пед. уч-щ по спец. Нач. воен. подготовка и физ. воспитания: М.: 1988. 224с.
10. Gotse H.Der. Achter-test. Armeesportler. 3.(10). 1965.

MODEL SCALES AS A MEANS OF MONITORING THE DEVELOPMENT OF MILITARY APPLIED SKILLS OF CADETS

*B.L. Yeritsyan,
V. Sargsyan Military Academy Ministry of Defense
of the Republic of Armenia, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: Military-applied skills, artillery cadets, circuit training, pedagogical experiment, mathematical analysis, model scales, overcoming obstacles.

Research relevance: The goal of higher military educational institutions is to train highly qualified officers for the armed forces. Thus, Military Academy named after V. Sargsyan provides future officers with comprehensive education.

To improve physical training a pedagogical experiment was conducted. Artillery cadets were involved in the experiment. It was necessary to identify the main pathways for developing military-applied skills and fundamental motor abilities, develop model scales and present a set of methodological guidelines.

Research aim and objectives: As a result of a two-year formative pedagogical experiment changes in the physical development of the cadets were studied, the workload of physical training lessons was determined, ways to improve their effectiveness were identified, and the rationale for the proposed method of developing the cadets' applied skills was developed and confirmed.

Research methods and organization: Methods of pedagogical testing and pedagogical observation were used; motor abilities, physical development, military-applied skills and mathematical analysis were measured.

To assess work capacity, The Harvard Step Test was conducted; Military-applied skills were tested using exercises number 17 and 18 (Physical Training Manual - 2021).

Research result analysis: Positive results were obtained for all exercises. It was proposed to take them into account when revising the curriculum.

Conclusion: As a result of the research, for the first time, data was obtained determining physical development, motor abilities and the development of military-applied skills, model scales were developed and recommended for implementation in pedagogical practice.

МОДЕЛЬНЫЕ ШКАЛЫ КАК СРЕДСТВО КОНТРОЛЯ ЗА РАЗВИТИЕМ ВОЕННО-ПРИКЛАДНЫХ НАВЫКОВ КУРСАНТОВ

Б. Л. Ерицян,

*Военная академия имени В. Саргсяна Министерства
Обороны Республики Армения, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: военно-прикладные навыки, модельные шкалы, педагогический эксперимент, артиллеристы, преодоление препятствий.

Актуальность исследования. С целью совершенствования физической подготовки и ее военно-прикладной составляющей, был проведен научный эксперимент. Для участия в нем были привлечены все курсанты Военной академии имени В.Саргсяна Министерства обороны республики Армения. Были определены основные пути развития военно-прикладных навыков, основных двигательных способностей, и на основе полученных результатов разработаны модельные шкалы и составлены методические указания.

В доступной и изученной нами литературе подобные исследования практически отсутствуют, что и подчеркивает необходимость и актуальность настоящего исследования.

Цель исследования. Целью двухгодичного формирующего педагогического эксперимента было изучение роста физического развития, двигательных

способностей и военно-прикладных навыков курсантов, определение степени нагрузки уроков по физической подготовке, пути повышения их эффективности, разработка и на основе полученных результатов построение модельных шкал по средством которых мог бы осуществляться контроль за развитием военно-прикладных навыков.

Методы и организация исследования. Были использованы методы педагогического тестирования, изучена литература, построены модельные шкалы, проведен анализ педагогического исследования.

В процессе исследования измерялись двигательные способности, физическое развитие, военноприкладные навыки и проведен математический анализ. Полученные данные позволили оценить качество занятий по физической подготовки, усложнить упражнения, что способствовало совершенствованию двигательных навыков и военно-прикладных способностей курсантов.

С целью изучения работоспособности был проведен Гарвардский степ тест; для определения силы, отжимание в упоре лежа; прыгучесть определялась двумя упражнениями, прыжками в высоту с места, и прыжками в длину с места. Военно-прикладные навыки тестировались упражнениями номер 17, 18, по теме преодоление препятствий.

Анализ результатов исследования. В результате работы были апробированы и получены положительные результаты по всем упражнениям. А использование данных модельных шкал облегчило организацию контроля процесса развития военно-прикладных навыков у курсантов в любой период учебного процесса.

Краткие выводы. В результате исследования, впервые были получены данные определяющие их физическое развитие, двигательные способности и развитие военно-прикладных навыков, разработаны модельные шкалы и рекомендованы для внедрения в педагогическую практику.

Տեղեկություններ հեղինակի մասին

Բագրատ Լևոնի Երիցյան՝ մ.գ.թ., պրոֆեսոր, Ֆիզիկական պատրաստության և սպորտի ամբիոնի դասախոս, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա, Երևան, Հայաստան, E.mail: bagratyeritsyan56@gmail.com

Information about the author

Bagrat Levon Yeritsyan, Candidate of Pedagogical Sciences, Professor, Lecturer of Chair of Physical Training and Sport, Military Academy after V. Sargsyan MoD RA, Yerevan, Armenia, E.mail: bagratyeritsyan56@gmail.com

Հոդվածն ընդունվել է 12.08.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 13.08.2025–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան